# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր 3213,
Մայրուղի թիվ 14
Հեռ. (0284) 95530,
Էլ. փոստ tatev.syuniq@mta.gov.am

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՌՈՒԴՈԼՖ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

*22 մայիս 2017թ.*

Ձեզ եմ ուղարկում ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 19-ի N 09-Ա, N 10-Ն, N 11-Ա, N 12-Ա, N 13-Ա, N 14-Ն, որոշումները:

Առդիր՝ 24 թերթ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 09-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 02 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրեն քի 14-րդ և 17-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 19-ի թիվ 2 նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀայաստանիՀանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և նրա վրա կառուցված շինությունները աճուրդ-վաճառքով օտարելուն հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 10-ի N 05-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

4. Հայաստան իՀանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և

պաշտոնյին դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 54-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N50-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ
2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ
4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ
5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ
9. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ
10. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2017ԹՎԱԿԱՆԻ N 10-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը /համաձայն հավելվածի/:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

9. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

10. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ ՝ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ 01/01/16թ -31/12/2016թ

Սկզբնական մնացորդ - 36724,92

վարչական՝3702,04 ֆոնդային՝ - 33022,88

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| Խում | Անվանումը | Գումարը |
|---|---|---|
| 07 | գույքահարկ | 6448.38 |
| 09 | հողի հարկ | 12852.45 |
| 22 | մուտքեր պետ.ձև.և գու.վարձ. | 4709.14 |
| 26 | ոչ պաշտ.դրամաշնորհներ | 12963.56 |
| 28 | օրենք.նիրավ. այլ ակտ.սահմ. | 936.12 |
| 29 | աչ ֆինան.ակտ.օտ.մուտքեր | 455.97 |
| 37 | պաշտոնական ընթաց.տրանս. | 120852 |
| 45 | տեղական տուրքեր | 263.1 |
| | ընդամենը՝ | 159480.72 |

ԾԱԽՍԵՐ

| Հոդված | Անվանումը | Գումարը |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձեր | 79857997 |
| 4212 | էլ. էներգ. ծառ-ն | 1610000 |
| 4213 | կոմ. ծառ-ն | 603220 |
| 4214 | կապի ծառ-ն | 1071018 |
| 4215 | ապահով. ծախսեր | 66000 |
| 4221 | ներքին գործուղումներ | 1546000 |
| 4232 | համակարգ.ծառ-ն | 180000 |
| 4234 | տեղակատ. ծառ-ն | 318220 |
| 4239 | ընդհանուր բնույթի այլ | 65300 |
| 4241 | մասնագ.ծառ-ն | 96300 |
| 4252 | մեք.սար.ընթ. նորոգ.և պ. | 544000 |
| 4261 | գրաս.նյութեր | 1735000 |
| 4264 | տրանս. նյութեր | 4724950 |
| 4269 | հատուկ նպատ.այլ նյութեր | 3120000 |
| 4511 | սուբսիդիաներ | 36105600 |
| 4729 | սոցիալական նպաստներ | 3089000 |
| 4819 | նվ.այլ շահ.չհետ.կազ. | 202200 |
| 4891 | պահուստ.միջոցներ | 9462819 |
| 5112 | շենք.եշինություն. կառուցում | 12213380 |
| 5113 | շենք.եշինություն. կապ.վերան | 9901317 |
| 5121 | տրանսպորտային սարքավորու | 993000 |
| 5122 | վարչական սարքավորու. | 1902000 |
| | ընդամենը՝ | 169407321 |

31.12.2016թ վերջնական մնացորդ - 23,096,269 այդ թվում՝ վարչական -2,413,738

ֆոնդային-20,682,531.30

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
19 ՄԱՅԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 11-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի, 35-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ
2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ
4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ
5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՏԵՂԵԿԱՆՔ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ժամանակահատվածը 01/04/16թ -31/12/2016թ

Սկզբնական մնացորդ - 27919.9

այդ թվում՝ վարչական -

ֆոնդային

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| Խումբ | Անվանումը | Գումարը |
|---|---|---|
| 07 | գույքի հարկ | 4517 |
| 09 | հողի հարկ | 9023.23 |
| 22 | մուտ…եր պետ.ձև.և գու.վարձ. | 3097.4 |
| 26 | ոչ պ…շտ.դրամաշնորհներ | 6856.87 |
| 28 | օրենք…նիրավ. այլ ակտ.սահմ. | 936.12 |
| 37 | պաշ…ռնական ընթաց.տրանս. | 91096.7 |
| 45 | տեղ…ական տուրքեր | 118.1 |
| | ընդամենը՝ | 115645.42 |

ԾԱԽՍԵՐ

| Հոդված | Անվանումը | Գումարը |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձեր | 54732831 |
| 4212 | էլ.էներգ. ծառ-ն | 965831 |
| 4213 | կոմ. ծառ-ն | 475220 |
| 4214 | կապի ծառ-ն | 817653 |
| 4215 | ապահով. ծախսեր | 66000 |
| 4221 | ներքին գործուղումներ | 1206000 |
| 4232 | համակարգ.ծառ-ն | 180000 |
| 4234 | տեղակատ. ծառ-ն | 233720 |
| 4241 | մասնագ.ծառ-ն | 12500 |
| 4252 | մեք.սար.ընթ. նորոգ.և պ. | 194000 |
| 4261 | գրաս.նյութեր | 945500 |
| 4264 | տրանս. նյութեր | 3357575 |
| 4269 | հատուկ նպատ.այլ նյութեր | 2532000 |
| 4511 | սուբսիդիաներ | 29677240 |
| 4729 | սոցիալական նպաստներ | 2770000 |
| 4819 | նվ.այլ շահ.չհետ.կազ. | 65000 |
| 4891 | պահուստ.միջոցներ | 9295974 |
| 5112 | շենք.նշինություն. կառուցում | 6106690 |
| 5113 | շենք.նշինություն. կապ.վերան. | 5525317 |
| 5121 | տրանսպորտային սարքավորու | 993000 |
| 5122 | վարչական սարքավորու. | 1317000 |
| | ընդամենը՝ | 121469051 |

31.12.2016թ վերջնական մնացորդ - 23096,269 այդ թվում՝ վարչական -2413,738

ֆոնդային-20,682,531.30

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 12-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 05-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ն մասի 21)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին որոշում է

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 10-ի N 05-Ա որոշումը
2. Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Խոտ գյուղի «Կալեր » անվ. տարածք, N 1 հասցեում գտնվող 09-047-0106-0421 ծածկագրով, 356 քմ մակերեսով գյուղատնտեսական նշանակության օբյեկտների հողամասը և նրա վրա կառուցված 330,4 քմ մակերեսով արտադրական նշանակության պահեստը աճուրդ-վաճառքով օտարելուն:
3. Մեկնարկային գին սահմանել՝ 950000/իննը հարյուր հիսուն հազար/ դրամ, որից 815000/ութ հարյուր տասնհինգ հազար/ դրամ պահեստի արժեք, իսկ 135000/մեկ հարյուր երեսունհինգ հազար/ դրամ հողամասի արժեք/1քմ-ի համար 380 դրամ/:
3. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հողամասերի աճուրդ-վաճառքով օտարելու համապատասխան ընթացակարգը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ
2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ
4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ
5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ
9. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ
10. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 13-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 54-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի րդ հոդվածի 1-ին մասով,<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստա Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետեր «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1 մասի 1-ին կետով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին որոշում է

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայ ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 54-Ա որոշու
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավա վարձատրությունը՝ պաշտոնային դրույքաչափը սահմանել ամսական 295.000 ՀՀ դրա
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարա աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակիցների թվաքանա հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվա
4. Սույն որոշման 3-րդ կետով հաստատված հավելվածի համայնքային ծառայությ պաշտոնների մասով 6-10-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետությ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքայ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մ մտնելու
պահի
5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայն

ղեկավարին՝ մեկշաբաթյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ
2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ
4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ
5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ
9. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ
10. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու
2017թ. մայիսի 19-ի N 13-Ա որոշման

"ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 59

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը) | Հաստիքների քանակը | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ Ն ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) | ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ՀՀ դրամ) | ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽ. ՖՈՆԴԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 1 | 295000 | 295000 | 3540000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 207000 | 207000 | 2484000 |
| 3 | Վարչական ղեկավար/Տաթև, Խոտ, Հարժիս և Հալիձոր բնակավայրերում/ | 4 | 1 | 160000 | 640000 | 7680000 |
| 4 | Վարչական ղեկավար/Սվարանց և Տանձատափ բնակավայրերում | 2 | 1 | 135000 | 270000 | 3240000 |
| 5 | Վարչական ղեկավար Քաշունի բնակավայրում | 1 | 1 | 80000 | 80000 | 960000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | | |
| 6 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 1 | 222000 | 220000 | 2640000 |
| 7 | Գլխավոր մասնագետ | 2 | 1 | 165000 | 330000 | 3960000 |
| 8 | Առաջատար մասնագետ- (3.1-1) | 3 | 1 | 155000 | 465000 | 5580000 |
| 9 | Առաջին կարգի մասնագետ (3.2-1) | 4 | 1 | 140000 | 560000 | 6720000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ...կարգի մասնագետ (3.3-1) | 6 | 1 | 102000 | 612000 | 7344000 |
| **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | | | | |
| ...մդարանավար/Շինուհայր գյուղում/ | 1 | 1 | 80000 | 80000 | 960000 |
| ...համակարգչային օպերատոր/Տաթևի համայնքապետարանում/ | 1 | 1 | 110000 | 110000 | 1320000 |
| ...որդ | 1 | 1 | 101000 | 101000 | 1212000 |
| ...քարար/Տաթևի համայնքապետարանում/ | 1 | 1 | 85000 | 85000 | 1020000 |
| ...դակ բանվոր/Շինուհայր գյուղում/ | 2 | 1 | 100000 | 200000 | 2400000 |
| ...դակ բանվոր/Շինուհայր գյուղում/ | 2 | 1 | 90000 | 180000 | 2160000 |
| ...մդարանավար-ակումբավար/Տաթև, Խոտ, ...իս, Հալիձոր, Սվարանց, Տանձատափ և ...կի գյուղերում/ | 7 | 0.5 | 96000 | 336000 | 4032000 |
| ...քարար /Խոտ, Հալիձոր, Տաթև և Հարժիս ...ղում/ | 4 | 0.5 | 96000 | 192000 | 2304000 |
| ...դակ բանվոր/Խոտ, Հալիձոր, Տաթև, Հարժիս/ | 4 | 1 | 72800 | 291200 | 3494400 |
| ...վար/Տանձատափ գյուղում/ | 1 | 1 | 72800 | 72800 | 873600 |
| ...դակ բանվոր/Խոտ գյուղում/ | 1 | 0.5 | 96000 | 48000 | 576000 |
| ...ղ/Ինքնաթափի/ | 1 | 1 | 80000 | 80000 | 960000 |
| ...ղ/Աղբատար/ | 1 | 1 | 140000 | 140000 | 1680000 |
| ...ղ/Էքսկավատոր/ | 1 | 1 | 120000 | 120000 | 1440000 |
| ...ղ/Գրեյդեր/ | 1 | 1 | 80000 | 80000 | 960000 |
| ...ղ/Կոմբայն/ | 3 | 1 | 120000 | 360000 | 4320000 |
| .../Տեխնիկայի կայանատեղի համար/ | 2 | 1 | 72800 | 145600 | 1747200 |
| ...նք | | | | | |
| ...արգի Տաթև | 59 | | | 6300600 | 75607200 |

ՀՀ Սյունիքի ... համայնքի ղեկավար՝ Մ. Միխոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 14-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդհոդվածի 4-րդպարբերությամբ,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի առաջին մասի 18-րդ, 19-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 70-րդ հոդվածների դրույթներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքում2017 թվականի օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 52-Ն որոշման 1-4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-4 հավելվածների:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ
2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ
4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

9. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

10. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու
2017թ. մայիսի 19-ի թիվ 14-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքում սահմանվում է տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար.
3. համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.
4. համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար.
5. համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
6. համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար.
7. համայնքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.
8. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար.
9. համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
10. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար.
11. համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
12. համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
13. համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
14. համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար.
15. համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար.
16. համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ [signature] Մ. Գերասիմյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու
2017թ. մայիսի 19-ի թիվ 14-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
# 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

***հիմնական օբյեկտների համար՝***

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ:

***ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝***

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման և արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի «1.» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կա շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համա սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյու եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնակա շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակ համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնակա շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ո հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է տարեկան 5000 դրամ:

6. Համայնքի տարածքում

1) բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածա առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացվա նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համա տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 20000 դրամ.

4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

**<u>հիմնական շինությունների ներսում՝</u>**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.

դ) 101 ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ.

**<u>ոչ հիմնական շինությունների ներսում՝</u>**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 15000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ
   3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000դրամ.
   4) խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ.
   5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ.
   6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000դրամ.
8. Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000դրամ.

[illegible] ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու [illegible] սահմանվում է.

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք
գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)
արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
4) Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1քմ դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում [illegible] օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ 250 դրամ.

11. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքային բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ 100 դրամ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

12. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 3000 դրամ:

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000 դրամ:

14. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

15. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ:

16. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 2500000 դրամ.
ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.
բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.
գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:
դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մ. Գերասիմյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու
2017թ. մայիսի 19-ի թիվ 14-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ.
2. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.
4. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար.
5. շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար:
6. Համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանց համապատասխան տարածքներից աղբի տեղափոխման վճար/պայմանագրով/

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մ. Գերասիմյան

*Հավելված 4*
*ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու*
*2017թ. մայիսի 19-ի թիվ 14-Ն որոշման*

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 20000 դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցվում է կատարված ծախսերի չափով:
3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանվում է մասնակիցներից վճար 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու և իրականացնելու համար աղբահանության վճար սահմանվում է՝
   1) կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ.
   2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ:
5. Համայնքի տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 դրամ
6. Համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանց համապատասխան տարածքներից աղբի տեղափոխման վճար սահմանել յուրաքանչյուր մեկ աղբարկղ աղբի տեղափոխման համար՝ 2000 դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մ. Գերասիմյան

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2017 թվականի համար սահմանվում է երկու հազար դրամ:
2. Համայնքային ենթակայության <<Շինուհայրի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2017 թվականի համար սահմանվում է երկու հազար դրամ:
3. Համայնքային ենթակայության մշակույթի տների դահլիճների վարձակալական վճարի չափ սահմանվում է՝ մանկական միջոցառումների համար քսան հազար դրամ, բարեգործական միջոցառումների համար զրո դրամ, այլ միջոցառումների համար երեսուն հազար դրամ:
4. Համայնքի սեփականություն հանդիսացող <<Հացահատկային հնձիչ>> կոմբայնները համայնքաբնակների համար հունձը կիրականացնեն մեկ հեկտարը՝ 14000/տասնչորս հազար/ դրամ ներառյալ դիզ. վառելիքը:
5. Համայնքի սեփականություն հանդիսացող <<Էքսկավատորը>> համայնքաբնակների համար կաշխատի մեկ ժամը 10000/տասը հազար/ դրամ/ներառյալ դիզ. վառելիքը/:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մ.Գերասիմյան